

# ԱՐՄԵՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕՐԱԳԻՐ ՏԱՄՈՒՐԵԱՅ

Այս հրատարակութի Ամսայն 10ին 20ին եւ վերջին:  
Տարեկան գինն է 100 դահեկան ԿԱՆԴԻԿ:  
Վեցամինչայ 60  
Ռւզողը կրնայ սովորագրութի, Պոլիս Հեղանիքի խամբ վերի  
յարկը թ. 4-5 Խմբագրի սենեակը:  
Սովորագրութիւնները ամեն ամսու 1-ին կոկը:

Երկրորդ լրզանին ամբողջ 18 թիւք ուղարկը 50 դահեկան  
պիտի վճարք: Անձնական լանու մը համար ըլլալու ծանուցմանց հա-  
մամատաբար սակարկութիւն կըլլայ:  
Ու եւ ինչ նամակ եւ գրութիւնք Խմբագրին պիտի ուղ-  
արկի:

10 ՕԳԱՍՏՈՒ

ԵՐԱԲՈՐԻ ՏԱՐԻ 1861

ԹԻՒ 34

### ԵՐՈՒՍԱԼԻՄԻ ԽՆԿԻ ԴՐԱ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Միաբանեալք եւ օրմնեալք: Բաժանեալք եւնզովեալք:  
«Ու մասնէ ընդ դուռն  
նովին և ոչխարաց...  
Եւ ոչխարըն ձայնին նո-  
րա լսեն...: Զօտարի  
զինտ ոչ երթիցեն, այլ  
փախիցեն՝ ի սմանէ, զի  
ոչ ձանաշեն զնայն օ-  
ստարաց:»

«Ինչ որ ոչ մտանէ ընդ  
դուռն՝ ի գաւիր ոչխա-  
րաց, այլ ընդ այլ երա-  
սէ, նա զաղ է եւ ասա-  
զակ...: Քանզի փարձ-  
կան է, եւ չէ փոյք նմա-  
զան սչխարացն:»

Հագունելի եւ պիրելի են:

Մերժելի եւ ատելի են:

Ինչպէս որ յայտ է թէ, Ս. Երուսաղէմի  
խնդիրը ծագած վայրկեանէն՝ մէկ քանի անգամ.  
Հոգեւորէն մարմնաւորի, մարմնաւորէն Հոգե-  
ւորի կերպարանափոխուելով, և վերջապէս այս  
պատճառաւ իւր էական կերպարանքը չի կրնա-  
լով կերպիւ մը ստանալ և հօն կայանալ, գըժ-  
քաղդաբար իրեն (խնդրոյն) ենթակայ եղող Հայ  
ժողովուեան անհաւասար կերպով (Քարայազէն)  
երկուքի բաժնուելուն ողբալի տեսարանը ներ-  
կայացնուցեր էր. Այս բանս՝ Ազգին Հոգեւո-  
րական մասը ցաւալց բայց լուսափայլ աչօք տես-  
նելով, ու ասոր հետեանքները խորհելով, իր վը-  
րայ առած Արբազան պաշտօնին և անով ունե-  
ցած անհրաժեշտ պարտուցը համեմատ՝ կամե-  
ցաւ շութափոյթ և օրինաւոր ձեռնարկութիւնն-  
երով յիշեալ խնդիրը խաղաղութեան և ար-  
դարութեան. Սուրբ փարախը մայքնելու հոգ  
տանիլ, ուրկէ անդուշաբար և ասկատամբօրէն  
դուրս ժայթկած էր.

Ուստի նախապէս. Արբազան Պատրիարք  
Հայոն՝ մէկ քանի Եպիսկոպոսներով ու Ապա-

դապետներով հանդերձ առանձին խորհուրդ  
մը ընելով միաբան հաւանութեամբ, և իրենց  
ազատ ու մարմնաւորէն անկախ իշխանութեամբը  
որոշեցին, որ շատապատ Հոգեւորական Համագու-  
մար Ժողով. մը կազմուի, և անոր ներկայու-  
թեամբը Երուսաղէմի՝ մեծ մասամբ Հոգեւոր  
և սակաւ մարմնաւոր խառն խնդրոյն՝ Հոգեւորի  
մասերը ըստ օրինի մարմնաւորէն բողոքովին զատ-  
ուի. որով Հոգեւորը Հոգեւորին վերապահուե-  
լով մէկ կողմէն խնդիրը ըստափայլ կերպիւ լուծ-  
ուելուն ու այն յաջողապէս իւր կայանը համե-  
լուն յառաջախաղաց մը ըլլուի. և միւս կողմէն  
յանիրաւի յուղեալ և ի յօտարաց գրիգեալ ժո-  
ղովուեան սրաբերը՝ ամեն կերպիւ հանդարտելուն  
յառաջածու մը ըլլուի, յիշեալ խնդրոյն մարմ-  
նաւոր մասը մարմնաւորին յայնձնուելով.

Եհա ամենապատիւ Արբազան Հայրենիս  
այս շահաւետ և իրական խորհուրդներով զօ-  
րացած, Օգոստոս 2 Զորեքշաբթի օր Պատ-  
րիարքարանի մէջ հարիւրի մօտ՝ ամեն աստիճա-  
նի Ակեղեցական Յարգելի Անձնաքններով, և  
իւր օրինաւոր նախագահութեամբ՝ վերցիշեալ  
որոշուած Համագումար Ժողովը կազմեց, ու-  
րուն ամբողջութիւնը անշուշտ Պօլսոյ Հայոյ  
ընդհանուր Աղերը կը ներկայացընէին.

Երդ այս Ժողովն մէջ գլխաւորաբար խօ-  
սուածներն ու վճռուածները Օգոստոս 5 թը-  
ւականով Մեծարգոյ Զամուրճեան Պատուե-  
լին կողմէն եւած Յայտարարուե մէջ համառո-  
տի պարտւնակեալ ըլլալով, աւելորդ կը սեպեմբ  
հոս զանոնք նորէն յիշատակել. բայց սա քանը մեր  
կողմէն կը յաւելումք թէ, յիշեալ ժողովին մէջ  
նոյն օրը ինչ որ որոշուած ու վճռուած էր, բոլորն  
այ Արբազաղէմի խնդրոյն. խաղաղապէս լուծուե-  
լուն նպաստելու, և խորվեալ Հայ հասարակու-

թեան սրտերը համդաբառելուն, և զերենք ամեն կողմանէ գոհ ըրած՝ վրդովուած խաղաղութիւնը իրենց մէջ վերահաստատելուն ամենամեծ կերպիւ օգնելու բաներ էին։ Ուստի առանց երկմտելու և առանց վարանելու հարկ էր որ՝ չէ միայն Պօլսոյ, այլ և ընդհանուր Տաճկաստանի Հայերն այս օրինաւոր և վաւերական ժողովոյ որոշումներուն ու վճիւներուն բատ օրինաց սիրով, և ամենայն յօժարութեամբ ու հնագամ գութեամբ ընդունելութիւն ցրցունին և անոնց առջին խոնարհէին ։ բատ որում չըկար Տաճկաստանի Հայոց մէջ ուրիշ մէկ Խեղեց ամագումար ժողով կազմելու կեդրոն մը՝ բաց ՚ի Կայսերանիստ Մայրաքաղաքին մէջ սահմանուած Հայոց Պատրիարքարաննէն։ չի կար մէկ ուրիշ Հոգեւորապէս ու մարմնաւորապէս ճոխացեալ գլուխ մը՝ որ այս կերպ ժողով մը կազմելու զօրութիւն ու արտօնութիւն ունենար, և այն ժողովին օրինաւոր նախագահութիւնը վարէր միմիայն Պօլսոյ Արքազան Պատրիարքէն զատ։ Սակայն կայ արդարեւ հոգեւորապէս մեծ գլուխ մը քան զՊատրիարքին Պօլսոյ, և այն է Արքազան Պատրուղիկոսն, և կայ ևս աւագ կեդրոն մը քան զՊօլսոյ Պատրիարքարանն, որ է Ա. Խչիսածին։ Կաես կայ Ա. Ժողովը մը, որ ՚ի վեր է Վ. Պօլսոյ մէջ կազմուած Համագումար Ժողովէն, այն է Խջմիածնայ Ա. Արևնհոգէ, որոնք միայն ունին լիազօր իշխանութիւն ընդհանուր և ամենայն Հայոց Հոգեւոր Պատրիարքներն ու անոնց ժողովները քննելու և հսկելու։

Եյն եթէ հարկ ըլլայ անոնք միայն ունին կատարեալ և բացարձակ արտօնութիւն, այն Պատրիարքներուն և նոցունց գումարած ժողովներուն մէջ եղած որոշմունքներն ու վճիւները հաստատելու կամ հերքելու, և ոչ այլ մէկը կարող է այս բաները ընելու։

Կայ մէկ ժողով մըն ալ (բատ Տաճկաստանի Հայոց), որ կըսուի Պաւառական ընդհանուր ժողով՝ բայց սոյնպէս Պօլսոյ Պատրիարքին նախագահութեամբը կրնայ գումարուիլ, և ահա այն ժամանակ սոյն ժողովը կարելի է Պօլսոյ Պղերաց Համագումար ժողովէն վեր դասուելով, անոր քննածը վերստին քննէ, որոշածին ու վճռածին վրայ որոշմունքներ ընէ, ու վճիւներ հաստատէ, բայց գարձեալ Ա. Ժողովոց Հաստատ կանոնաց, և նախնի հիմնական աւանդութեանց համեմատ վարուելով, Քանդի հո-

գւորականք՝ թէ Պատրիարք, թէ Կաթուղիկոսք, թէ Պատրիարքունք, թէ Եպիսկոպոսունք և թէ համօրէն Աղերք՝ հանդերձ ժողովովքիւրեանց շղթայակապ պարտին ամենայն միամտութեամբ հնագանդիլ և խոնարհիլ բովանդակ այն Ա. կանոնաց, որոնք որ սահմանեցին Հոգւոյն Արքոյ ազգեցութեամբը, այն նախնի Սուրբ և Հասուածարեալ Հայրապետութերը Տիեզերական և Բնդհանուր Ա. Ժողովներու մէջ, աւանդելով վանոնք Ընդհանրական Եկեղեցւոյն գանձարանը, ուր հաւատարիմ պահպաններուն ձեռք գարդէ կը պահպանուին, առանց գողմը մերձենալու և ցեց մը ապականելու, և յաւիտեան անվտանգ պիտի պահպանուին։

Եւ արդ ասմաք այսքան առ այժմ հոս յիշեւէն վերջը՝ խօսքելնիս վերստին կը գարձունեմք սա Օգոստոս 2ին կազմուած Համագումար Հոգեւոր Ժողովին վրայ, և կըսեմք թէ քանի որ Պօլսոյ Պատրիարքը Խջմիածնայ Մայր Ա. Ժողովուն ընդունած Հոգեւորական արտօնութեամբը Շնիսացած, և Օսմանեան Ա. եհտիառ Կայսերութեան կըզմէն շնորհուած Պատրիարքական իշխանութեամբը գորացած, միայն Պօլսոյ մէջ իւր հնագանդութեամբ ներքեւ գանուողներէն հարիւրի մօտ Եպիսկոպոսաց, Ա. արդապետացած և Ա. թոռուակալաց ներկայութեամբը Ժողով գումարած, և անոր մէջ որոշումն եւ վճրութեամբ է, բաց ՚ի վերց ասացելոցս, և ըստ Եկեղեցական կանոնի մէկը կարող չէ այն Ժողովն չամարելու, և անոր որոշումներն ու վճիւները հերքելու յանդգիրը, վասն զի քանի որ այն Հայը (Եկեղեցական և Եղիսարհական) Տաճկաց Տէրութեան հաստակ է, անցուշտ Պօլսոյ Պատրիարքին չափաւորեալ իշխանութեամբ ներքեւ է, Եւ որ իշխանութեամբ ներքեւ է, ՚ի հարկէ պիտի հնագանդի անոր ամեն չափաւորեալ որոշումներուն ու վճիւներուն Եթէ հանդիպի այն որոշմանց ու վճռաց մէջ ընդդէմ օրինի և իրաւանց բան մը, թէ որ իրն պիրը Հոգեւոր է, ու զղակի Խջմիածնայ Ա. Աթոռին ալիստ ձգուի, և եթէ մարմնաւոր անտարակոյս նախ Եղիբն ընդհանրութեամբ, և յետոյ Տէրութեան բարձր ժողովին պիտի բողոքուի, և այնուհետէ հարկ եղածը պիտի ՚ի գործ դրուի։

Մենք չորս հարիւր այսքան տարիներէ ՚ի վեր այս կերպ ըլլայ կարդացած լսած տեսած ու գիտցած եմք։



Պօլսոյ Հայոց բովանդակ Աղերը ներկայացը նող ժողովը անջօր համարող, և անոր վճիռները անարգող Հայը, ալ այսուհետէ ո՞ր Հոգեորդ Ժողովը պիտի զօրաւոր համարէ, որ ժողովին վճիռները պիտի պատուէ . Եշմիածնայ՝ ան ոլ Սէր Օրագրոյն Յաւելուածին մէջ յայտնի տեսանք որ այն Մայր Վթուը Տաճկաստանի Հայոց Եկեղեցւոյ կառափարութեանը վայ իշխելու կամ տնօրէնութիւն մը ընելու արտօնութիւն չունի եղեր . իսկ արդ Հայոց համար ասկէ վեր և բարձր ժողով, ու ժողովատեղի մը չըլսարով, արգեօք պէտք եղած տան նախնի ժողովներն ընդունելով՝ անո՞նց վճիռները պիտի պատուէ . Այս ալ խիստ տարակուսելի բան մընէ, վասն զի ասկէ 134 տարի առաջ եղած Ընդհանուր Ժողովի մը վճիռները սոյն Հայը քանի մը խօսքով ջրեց, և ոչինչ համարեց . Ենչու . Քանզի գէմէր իր արդի նպատակին, Ըսելէ որ այս օրուան նպատակին՝ 134 տարուան ժողովին վճիռը գէմ գալուն՝ հարկ եղեւ զայն մէկ խօսքով ջրելու, հապա ապագային ունեցած նպատակներուն՝ 3—4 հարիւր կամ ևս աւելի տալուան Ա. Ժողովոց կանոններն ու վճիռները գէմ գալու որ ըլլայ, այն ատեն ի՞նչ պիտի ընէ . Հարկաւ պիտի անոնք ալ ջրելու աշխատի ինչ կերպիւ որ ըլլայ . Աւրեմն այն Հայուն առջին ընդհանրապէս Հոգեորդ Ժողովուոր Ժողովները անզօր, և անոնց վճիռները ոչինչ բաններ են . Եւ ասկայն երկրի վայ չե կայ ըսենք ուրիշ մէկ Հոգեորդ ժողով մը, որ այս Հայը անոր անդառնալի վը ձիռներուն հնաղանդի, և ջերմեռանդաբար պաշտէ նորին օրէնքները . Այս կայ, և ահա յիշեալ շաբաթ օրուան Եարեկեան Ժողովին ժողովակից եր, քանզի ինքն եր այն կեդրոնը հաստատողը, և այն անմեղ Հայը գլխէ հանելով հօն տանողը, ինքն եր ան Հայուն միւս եղբայրները իրենց Հոգեորդ Հոգե գէմ ապատաւ բեցընելու փորձեր ընողը, վերջապէս ինքն եր այն — Օգոստոս երկուքին եղած Եկեղեցական (Համագումար) Ժողովին մէջ չե գտնուող կամ չստորագրող, կամ ասորագրութիւննին յետքու կուղը Եպիսկոպոսը Ա արդապետը ու Քահանան —, և ահա այս Հայուն Ժողովն եւ որ սոյն ստորագրութեամբ — Օգոստոս 8ին Յայտարարութիւն մը հանելով՝ հաղարաւոր Հոգե Հարց, և որդւոց մէջ աեղը սէր և բարձրացնելու սերմունքներ դաներ եր, որ ի հարկէ ատենին

գայիթակղութեան պտուղները ինքեւս պիտի վա-  
յելէ . . . :

Վհա այս տեղ յանկարծ հարկ կըլլայ բերաննիս փոխել և ըսել թէ՝ երբեք չունի այն մարմնաւոր այլ յանցանք, քանի որ յանցանքն աւելը չոգեռքէն ըլլալը յայտնուեցաւ Օդոսոս Յշաբախթ օրուան ժողովին մէջ։

Վշիարհական Հայուն ամսմեղութիւնը երեւան ելաւ, երբ Օգոստոս 8 թուականով այն ինքնագրուխ Եկեղեցականին Յայտարարութիւնը հրատարակուեցաւ։ Տարեմիտ Հայուն չարչազրուեցար իմացուիք, որ ատեն տեսնուեցաւ յիշեալ Յայտարարութեան մէջ բազումուտեր, զօպարտութիւններ, խարդախութիւններ, չարչազր դատողութիւններ։

Աւստի առ այժմ թողումք մեր Հայ եղբօ-  
րը ըսելիքներնիս , և դառնամք սա Եկեղեցա-  
կանին Յայտարարութեամբ , պնոր մէջ եղած  
քանի մը գիեաւոր կէտերուն վրայ գիտողու-  
թիւններ ընելու :

“Ասիր սա “առ Վզգային լրութիւնն ո ըսեւ  
լրվաց գրութիւնը այրց բովանդակութեանը  
յանձնելուն համար Ս. Վ. Եւետարանէն առնելով  
սա երկու խօսքը կըսեմք թէ՝ բուն “Վզգային  
լրութիւնն ”, “զօտարի զհետ ոչ երթիցեն այլ  
փափոխեն ՚ի նմանէ , զի ոչ ճանաչեն զձայն օտառ-  
րաց ” : Ուստի նախապէս այս խօսքը գրելու ա-  
ւելորդ աշխատութիւն մին է վրան առեր ոյն  
և ոչխարաց դաւիթին դունէն ներս չի մտնող Ե-  
կեղեգականը ” :

Երկուորդ , կերեւի որ Յայտաբարութեան  
դրուցուածքը շահեւուն կամ հակառակախօսու-  
թիւն մըն է , որովհետեւ ուրիշն վրայօք խօ-  
սածներուն ամբողջութիւնը արդեամբ իր վրայ  
կը տեսնուին . ատոնց համար ալ ուրիշ երկարա-  
բանութիւններ չըրած սա միայն կըսէմք թէ  
“ Հայր սուրբ ” , “ Օ ի՞ տեսանես զ’չեւզ յա-  
կան եղբօր քո , և ՚իքում ականոդ զգերանոդ ոչ  
տեսանես . կեղծաւոր հաննախ զգերանոդ յակա-  
նէ քումմէ , և ապա հայեսցես հանել զշեւղն  
յականէ եղբօր քո ” : Եյ խիստ արժան եր  
այս խօսքը հոս տեղ միշենիս , աւելի սա բանին  
համար թէ Երուսաղէմի Միաբան և Պօլիս  
պատգամաւոր եկող Յակոբ վարդապետը վե-  
րըստին Երուսաղէմ դառնալուն համար չըրա-  
հինդ օր առ աջ Պօլսոյ Պատրիարքին խմացնե-  
լէն զինի , գացած օրը անդամ մըն ալ չերեւա-  
լուն համար (սոսկալի՛ յանցանիք) , Պատրիարքու-



**Պարա.** Հիսուս աքսորեց : Բայց եռքէն Սուլթան Մահմետը գերեաց և աքսորելոց աղաւառութիւն տալովը, Յարութիւն Կաթուղիկոսն աշառանց Պատրիարքի հրամանի վերատին Ըղթամար դարձաւ, և քանի մը տարի նոյն վիճակով ապրելէն վերջը՝ հոն մեռաւ, և գերեցաւ նը դեռ կեցած է :

Մինչև Յակոբ Արքազանին օրը Ըղթամարը Առաջնորդութեան կողմանէ ինչ վիճակի մէջ էր յայտնի չէ, բայց յիշեալ Արքազանը Պատրիարք նստելէն պահ մը ետքը, սկըսան Ըղթամարցիք զաղացակ բարձնել, և իրենց նզովեալ Կաթուղիկոսութիւնը նորէն Պօլսոյ Պատրիարքէն պահանջել:

Մնացեալը գալ անգամ:

## Ը Զ Գ Ե Յ Ի Ւ

Ազգային ներքին արդի երկպառակութիւնները, մէծ հարուած պատճառեցին Փրկչալին Հիւանդանցին խղճակացը :

Որովհետեւ յայս վայրի դժբաղդաբար Ազգային ժողովները դադարած եւ Հիւանդանցին Հոգաբարձուները բոլորովին ետ քաշուած ըլլալով՝ խեղձերը մնացին անտեր եւ անօգնական: Երուաստեմի Վանքը անդադար իր Պատրիարքը կուզէ, իսո ժողովուրդը երկուքի բաժնուած՝ մէկը ներսէն, միւսը դուրսէն կուզէ ինն Պատրիարք նստեցնել, եւ ասոր համար Ազգային բոլոր գործերը երեսի վըրայ ճգած՝ միակերպ կը մրցին:

Ահա ասանկ մէկ ժամանակ այն խղճակներն ալ ինչ վիճակի նէց գոնուելնին, եւ ինչ բան ու գելնին ամեն մարդ դիմաւ կրնայ երեւակայել, եւ ունի այն մարդը մարդասիրական ճշմարիտ զգացմունք:

Եւ անաւասիկ ամենէն առաջ մէր Ամենապատիք Արքազան Պատրիարք Հայրը այս զգացմունքն եւ, իր Հայրական գուրքն շարժեալ՝ շուպառ ուզեց այն խղճակաց ու տառապելոց օգնութիւն մը ընել, առ ժամանակեայ կերպի տօնութեամբ մը որոշելով, մինչեւ որ Ազգային գործերը իր խաղաղ ընթացը գոնէ:

Ուստի այս մասին Ազգիս մէկ քանի երեւելի եւ բարեսէր անձանց առաջարկութիւն մը ընելով, հոգունց ընդունելութեամբն ու հաւանութեամբը ուրջուացաւ որ առ այսմ Ազգին բարերաներէն նըւիրական հարաբում մը ըլլալով՝ գոնէ ամիսի մը չափ այն Ազգին խղճակները մատակարարուին:

Եւ այս բանս արդեամբ ՚ի գործ դրուելուն համար՝ անմիջապէս Թօխարեւան Մեծապատիք Մինա է Ֆենտիքին Ազգասէր ջանիցը յանձնուեցաւ:

Արդարեւ այս միջոցիս ասանկ մէկ գործ մը առանձին վրան առնելը, մէծ եւ կատարեալ ազգասիրութեամբ մը կրնայ ըլլալ, ան ալ չէ խօսրով, այլ գործով, որ ինչպէս յուսամբ թէ քիչ տաենի մէջ պիտի տեսնուի արդիւնքները:

Մեծապատիք է Ֆենտիքի այս գործին յանձնառուու ըլլալին ՚ի վեր միակերպ կ'աշխատի յիշեալ նոփրական հաւաքումը օր ըստ օրէ զարգացնել ՚ի նըպատ աղքատին, որ խեղճերը ամեն կերպին մը խիքարուին: Ես ահա մէկ քանի օրուան մէջ եղած արդիւնքին ցուցակը, որը Պատրիարքարանն իշքրկուած է օրագրոյս մէջ հրատարակուելու համար:

## Ղորոշ Մեծապատիք

- 5000 Բարերար անձ մը
- 4000 Միրիման Ամիրայ Փափաղեան
- 4000 Միմօն Ամիրայ Սարիմեան
- 4000 Յակոբ աղա Մուլպահեանեան
- 2000 Յակոբիկ եւ Միմնիկ աղայք Նորատունկեան
- 2000 Գէորգ եւ Մանուկ աղայք Գարամաճեան
- 4000 Աւետիս եւ Գէորգ աղայք Պարտիզպանեան
- 4000 Մինաս էֆչոսի Թօգաթլեան
- 500 Պօլոս աղա Աշնանեան
- 500 Գէորգ աղա Խօրասանձեան
- 500 Մկրտիչ աղա Մոմձեան
- 500 Գէորգ աղա Մարգարեան
- 500 Մանտեսի Աբրահամ աղա Հարենց
- 500 Բարեպաշտոն Անձ մը
- 560 Գումբագուսի դուրսի Եկեղեցին
- 270 Խւալիւտարի Ս. Կարապետի Եկեղեցին
- 185 Խուզիւնանուխի Եկեղեցին
- 100 Ամենապատիք Յակոբ Արքազան
- 570 Խւալիւտարի Ս. Խաչ Եկեղեցին

48685

Մինչեւ ցարդ եղած հաւաքումը այսրան ըլլալով, նետզմէնտ եղածները օրագրոյս միջոցաւ պիտի հրատարակուին:

Յուսամբ թէ Ազգին դեռ ուրիշ առարինի եւ աղքատասէր անհնատները պիտի մասնակից ըլլան այս բարեգործութեանց, որով այն տառապելաւ աղքատները նախ ամեն կերպի միխրարելով՝ յետոյ իրենք ալ Աստուածակոյս կողման միխրարուին:

Ուստի յետ բարեմաղքելոյ վերոյիշեալ ՚ի նոյիրատու բարերարս, արտասուալից աջօր եւ ցաւալից սրտիք բազկատարած կը պաղատիմք առ Արքիչն երկնից, որ խելով այն հարիւրանոր աղքա-



նրանքարակաւ, աղտեղելու՝ ցնիքացը մը ունեցած էն, Այսուհետև որ խաւարասէրը կրնայ հաւատացընել Ազգին թէ՝ Մեղուն—Միւնատին և համախոնք նոցին ձշմարտապէս Հայ էն, ու Հայ կրօնքին երկրպագութիւն կ'ընեն, և անոր եկեղեցականները կը յարգեն, որ ատեն որ իրենց նրատարակութիւններով այն բաները իրավէս իւրեանցվրայ տեսնուելուն նշոյլը անգամ չի բռնուցին:

Երեկ անեծք, այսօր նզովք, և զիտէ թէ վաղը ինչ . . . : Այն ալ բող Ազգը մտմտայ, մեր ձեռքէն բան չիգար, մենք միայն մեր յանձն առած պարտաւորութիւնը կրնամք կատարել, որ և անոնց գրանները ներքել:

Առաջի աս անգամսու նայինք արդի նրատարակութեանցը մէջ ինչ են գրեր, որի ինչ են ըսեր, և Ազգին ո՞ր ազնիւ անհատին սիրոց վիրաւորեր են: Նախ և առաջ կը տեսնեմք որ մատուցերնուն ճորդ նզովք մըն են անցուցեր վեր վար կը բաշկրաւեն. նզովք չըկայ կըսեն, կայ կըսեն, իրենք ալ չեն գիտեր ինչ կըսեն. նորեն միջոց մը գտած՝ նզովք չիկայ, կար նէ ալ վերցաւ կը գրեն, չըլլայ նէ վերուցին կը գրեն, վերջապէս ինքըզինքնին զփորեալ մարդոց այս գրաննին իրենք ալ չը գիտեն: Եւ ահա առաջին խեղճ վիճակին:

Տկարամիւնները չեն կրնար կերպին մը համոզուի թէ վիայէն դար ու կես անցած ընդհանրական նզովք մը խիստ դիրութեամբ չի վերնար. 454 տարի առաջ Կարուղիկոսով, Պատրիարքներով, Եպիսկոպոսներով, Վարդապետներով, ու Քահանաներով, եւ այլն, դրուած նզովք մը, մէկ քանի Կղերք իրենց գլխուն կարող չեն վերցնելու: Ատիկայ օրենքի կանոնի, եւ իրաւանց հակառակ, եւ ըստ մեզ հաստատան ու ընդունին ալ խելքի դէմ բան մըն: Եւայց Մեղուին—Միւնատիին խելքին խիստ յարմար գալուն՝ զուտով հաստացեր եւ ընդուներ են թէ նզովքը վերցաւ, եւ թէ զըկայ, յիրակ չի կայ, վերցաւ. ինչ. գլուխներէն խելքը:

Բայց իրենցմէ ապահովութիւն մը ուղելու համար՝ կը հարցունեմք Մեղուի—Միւնատիի (Մասիս ալ լսէ) Վարպետներուն թէ՝ ըստ օրինի տրուած բռնական հին նզովք մը երբ ատանկ դիրութեամբ այսինքն «վերցուեցաւ» ըսելով վերնայ նէ ընդհանուր ժողովոց բարձր իշխանութիւնը չի նուաստանար, եւ ալ անկէ ետք ո՞ր ժողովին վճիռը կըրնայ հաստատ մնալ: Թողումք անցեալը եւ ներկան հասպատագային . . . Կամ մէյմալ նզովք չի դընէլ, եւ կամ դրուելու ալ որ հարկ ըլլայ Մեղուի—

Միւնատիի եւկամիրենց նազուկներուն նախազամութեամբը դնել: Ահա այն ատեն կարելի է բանի մը նմանի, այսինքն հաստատուի: Զարմանք: Մարդիկ Աստուածնիդ պաշտէք, հոգինիդ սիրէք, բռնէք սա արդի նզովքին օժիքը. զի այն խաղալիք չէ. ատիկայ Ս. Յակովիայ Վանքին դրանը հաստատ բանալին է, որ Վանքին ապահովութեամբը ամրապէս շինուեցաւ, ու միլիոնառ Ազգին հաւանութեամբը մէջը գտնուած Միաբանութեան ձեռքը յանձնուեցան՝ որ ուրիշ անգամներու պէս օտար եւ անձնօր մարդիկ ներս ջառնեն, որով Վանքը վնաս է գերծ մնայ:

Կրցանք բան մը հասկցընել արդեօր, և Առանդութեանց հաւատարիմ պաշտպաններ եւ դուք ալ իմացաք, լսեցիք, Մեղու—Միւնատի Զէլէպիներ, Վանքին վիճակը բարելաւցնելու հոգ տանողներ, թէ այդ նզովքը վերնալուն պէս Ս. Յակովիայ Վանքը 454 տարի առաջ ունեցած բարեկարգութենէն կրկնապատիկ բարեկարգութեան մը ենրակայ կրնայ ըլլայ: Զէ, սխանլ կարծիք, անտեղի կասկածանք է, կը պոռան Մեղու—Միւնատի ժամանակի մարգարեները, ատոնք ինւարեալ գտումներ է կը գոչեն նոր դար ու լուսաւորեալ հըմայեակները:

Աղէկի, բող ամանկ ձեր ըսածին պէս եղած ըլլայ, բայց հաստատ ապահովութիւն: Ան չիկայ, խօսք միայն. Խօսքը տուղրակի մէջ չի մտներ կըսեն. մէնք ատեն մը խօսքով հսկիւտարու ձեմարանն ալ պիտի բարեկարգէնք, Փարիզի դպրոցն ալ յառաջացնէնք, դեռ մօտերս խոր մը լեցուն խօսքերով Հիւանդանոցն ալ պիտի սանկ ընէինք, նանկ ընէինք բայց գործքով ամենն ալ իր տեղը գտաւ: Ուրեմն գացէք բաներնիդ, խօսքատիկ Պարոններ. դուք ան նայեցէք որ ձեր բերերը լեցունէք շատ մը օդաբուխ եւ տիտայաբան խօսքերով, ատանկ Ազգային փափուկ խնդիրներու վրայ խօսիլը, կամ կարծիք ընելը ձեր խելքեն, ձեր դատումն վեր բաներ ըլլայը յայտնի կերեւի . . .

Խմբագիր-Տնօրին  
Մ. Գ. ՏէՅԻՐՄԵՆՃԵԱՆ

ՏՊԱԴ-ՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ՔԻՒՐԲՃԵԱՆ  
ԽՈՍՀԱՌԱՌՈՒՊՈՒԽ ՅԱՆԱՆՉԱՂԱՐ